ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հայաստան

Համայնքային զարգացման ռեսուրս-կենտրոններ

Ծրագրի նպատակը՝ *համայնքահեն կազմակերպությունների կարողությունները զարգացնելու միջոցով ապահովել քաղաքացիների ակտիվ մասնակցությունը համայնքների զարգացման գործում:*

Հայաստանի գյուղական համայնքների զարգացման գործում շատ կարևոր է քաղաքացիների ակտիվ մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում: Հայտնի է, որ համայնքի անդամները հիմնադրում են համայնքահեն կազմակերպություններ, որոնք նպաստում են տարբեր համայնքային հիմնախնդիրների լուծմանը և համայնքի զարգացման ծրագրերում՝ քաղաքացիների ակտիվացմանը: Չնայած այս ամենին, այնուամենայնիվ, շատ համայնքահեն կազմակերպություններ երբեմն չունեն քաղաքացիների ակտիվությունը բարձրացնելու բավարար կարողություններ:

2006 թ. մայիս ամսին Եվրասիա համագործակցություն հիմնադրամը մեկնարկեց «Համայնքային զարգացման ռեսուրս-կենտրոններ ծրագիրը, որի նպատակն է զարգացնել համայնքահեն կազմակերպությունների կարողությունները՝ գյուղական համայնքների զարգացման գործում ակտիվ դեր ունենալու համար: Հիմնադրամը դրամաշնորհային աջակցություն տրամադրեց թվով ինը հասարակական կազմակերպությունների, որոնք ստեղծել են ռեսուրս-կենտրոններ և ներկայումս աջակցում են այլ կազմակերպություններին ու համայնքային խմբերին:

Կարողությունների զարգացում

Բոլոր ռեսուրս-կենտրոններն ստեղծվել են մարզերում արդեն իսկ ակտիվ գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Այդ կազմակերպություններն ընտրվեցին 2006 թ-ին հայտարարված մրցույթի շրջանակներում: Ընտրության ժամանակ հաշվի առնվեցին ոչ միայն նրանց՝ որպես ռեսուրս-կենտրոններ ծառայելու հնարավորությունները, այլև համայնքահեն կազմակերպություններին ծառայություններ մատուցելու և ռեսուրս-կենտրոնների ցանցի բաղկացուցիչ մաս կազմելու պատրաստակամությունը: Հիմնադրամն օգնում է յուրաքանչյուր կազմակերպությանն ուսուցողական դասընթացներ կազմակերպելու, խորհրդատվություն տրամադրելու և այլ ծառայություններ մատուցելու հարցերում: Դրանք հիմնականում առնչվում են ծրագրեր մշակելու, ֆինանսներ հայթայթելու, մոնիտորինգ և գնահատում անցկացնելու, ինչպես նաև համայնքի բնակիչներին ակտիվացնելու հետ կապված հարցերին: Ռեսուրս-կենտրոնները նաև հնարավորություն են տալիս համայնքի բնակիչներին՝ օգտվելու ինտերնետային ծառայություններից, էլեկտրոնային և տպագիր նյութերից: Նմանատիպ ծառայությունները նախ կմատուցվեն անվճար, այնուհետև, վճարովի հիմունքներով՝ տեղի գործարար մարդկանց, տեղական ինքնակառավարման մարմիններին և դոնոր կազմակերպություններին: Ամեն ամիս այդ ռեսուրս-կենտրոնները անհատներին ու տեղական կազմակերպություններին տրամադրում են միջին ծավալով 1500 ծառայություններ:

Ռեսուրս-կենտրոնների կայունությունն ապահովելու նպատակով հիմնադրամը դասընթացներ է անցկացրել ուղղված մասնակցային գնահատման, մարկետինգի և եկամուտների կուտակման հարցերին:

Համագործակցություն և կայունություն

Եվրասիա համագործակցություն հիմնադրամն ստեղծել է ռեսուրս-կենտրոնների ցանց, որի միջոցով համագործակցություն է հաստատվել բոլոր ռեսուրս-կենտրոնների միջև և իրականացվում են տեղեկատվության ու փորձի փոխանակման աշխատանքներ: Այն ռեսուրս-կենտրոնները, որոնք այս ծրագրի մաս չեն կազմում, բայց գործում են այլ համայնքներում, ևս կունենան ցանցում ընդգրկվելու հնարավորություն: Ապագայում ռեսուրս-կենտրոններն ու ծրագրի շահառուները կմասնակցեն հիմնադրամի այն ծրագրերին, որոնք առնչվում են երիտասարդության հարցերին, տպագիր մամուլի զարգացմանը և կոռուպցիայի դեմ պայքարին:

Եվրասիա հիմնադրամը մասնավոր կառավարվող, ոչ շահութաբեր կազմակերպություն է, որին աջակցում են ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը և այլ դոնորներ: 1992 թ-ից ի վեր Եվրասիա հիմնադրամը ներդրել է ավելի քան 370 միլիոն ԱՄՆ դոլար և իրականացրել ավելի քան 8400 դրամաշնորհային և տեխնիկական աջակցության ծրագրեր Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Ղազախստանում, Ղրղզստանի Հանրապետությունում, Մոլդովայում, Ռուսաստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Ուկրաինայում և Ուզբեկստանում: Սկսած 1993 թ-ից՝ Եվրասիա հիմնադրամը Հայաստանում ներդրել է ավելի քան 30 միլիոն ԱՄՆ դոլար:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը Եվրասիա հիմնադրամի հետևորդ կազմակերպությունն է:

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի նվիրատվության շնորհիվ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, որի բովանդակության համար պատասխանատու է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

Գործակից կազմակերպություններն՝ ըստ մարզերի



Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ

Հասցե՝ 0009, ՀՀ, ք. Երևան, Զարոբյան փ. 56
Հեռ./ֆաքս՝ (374 10) 58 60 95/96
info@epfound.am, www.epfound.am